ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2015, 68, № 1, 98-99

ՌԻՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԽՈՐԵՆՅԱՆ
(ծննդյան 80-ամյակին)

2015թ. ապրիլի 3-ին լրացավ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ սերնդի կին երկրաբաններից մեկի՝ երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող Ռիմմա Հարությունի Խորենյանի ծննդյան 80 - ամյակը:

Ռ.Խորենյանը 1952թ. ոսկե մեդալով ավարտել է միջնակարգ դպրոցը, 1957թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի պետրոգրաֆիայի բաժնում, որտեղ զբաղվել է տարբեր հասակի մագմայական ապարների պետրոգրաֆա-մինեբալաբանական հետազոտություններով:

1975թ. Ռ.Խորենյանը հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Ծաղկունյաց լեռնաշղթայի մեզոզոյի մագմայականությունը» թեմայով:

Հետագա տարիներին նա շարունակել է Ծաղկունք-Զանգեզուրի գոտու հյուսիսային հատվածի տարբեր հասակի մագմայական առաջացումների հետազոտությունները, մասնակցել է «Մագմայական, մետամորֆային և հանքային ֆորմացիաների 1:300000 մասշտաբի քարտեզ ԱՏ համակարգում» թեմայի աշխատանքներին (2010թ.):

Ռ.Խորենյանն առաջին անգամ Ծաղկունյաց լեռնաշղթայի սահմաններում (Գոնդվանայի հյուսիսային հատված) հայտնաբերել և ուսումնասիրել է յուրայի հասակի կղզաղեղային տիպի դիֆերենցացված՝ ցածր Na-ական ալկալիության հրաբխային հաստվածքը, վերականգնել է Մենսար-Գեղարոտի հրաբխա-ինտրուզիվ տեկտոնական կառույցը՝ հերքելով մինչ այդ տարածված «պասիվ ցամաքային ծայրամասի» վարկածը:

Կարևոր նշանակություն ունեցավ Ռ.Խորենյանի եզրակացությունը Ծաղկունք-Զանգեզուրի գոտու և Վիրահայոց-Ղարաբաղի կղզաղեղային կառույցի, մեզոզոյան ժամանակահատվածում միանման տեկտոնամագմայական զարգացման պատմության վերաբերյալ:

Ռ.Խորենյանն իր բազմամյա գիտական գործունեության ընթացքում մասնակցել է տարբեր միջազգային և հանրապետական գիտաժողովների: Նա հեղինակ է երկու մենագրությունների (մեկը համահեղինակությամբ), մի շարք հոդվածների և ձեռագիր աշխատությունների: Ներկայումս Ռ.Խորենյանն իր հարուստ գիտական փորձն ու

հմտությունները փոխանցում է Պետրոլոգիայի լաբորատորիայի երիտասարդ աշխատակիցներին:

Ռ.Խորենյանն ակտիվ մասնակցություն է ունեցել ինստիտուտի հասարակական կյանքում, բազմիցս ընտրվել է արհմիության կոմիտեի անդամ, իսկ 1984թ.-ին՝ արհմիության գիտաարտադրական հանձնաժողովի նախագահ:

Նա անկեղծ, շիտակ և բարյացակամ անձնավորություն է և արժանիորեն վայելում է իր շրջապատի սերն ու հարգանքը:

Ի սրտե շնորհավորելով Ռ.Հ.Խորենյանին հոբելյանի կապակցությամբ, մաղթում ենք նրան առողջություն և հետագա բեղմնավոր աշխատանք:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն